ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 29-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որը քննարկեց ՀՍՍՀ ԳԱ հետագա աշխատանքային գործունեությունը ՍՄԿԿ XXVII համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի հունվարյան պլենումի առաջադրած վերակառուցման խնդիրների լույսի ներքո։ Բացման խոսքով հանդես եկավ Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։ Նա մասնավորապես կանգ առավ կուսակցության ընդունած մի շարք կարևոր որոշումների վրա, որոնք նոր պահանջներ են դնում ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտությունների առջև։ Ընդ որում նշվեց, որ հիմնարար գիտությունների վերելքը ապահովելու միջոցները նույնն են, ինչ որ մեր հասարակության կյանքի մյուս բոլոր ոլորտներում՝ աշխատանքի վերակառուցում և ինտենսիֆիկացում։ Խոսվեց այն հիմնական դժվարությունների մասին, որ կան կազմակերպչական, հաստիքային, կառուցվածքային և տեխնիկական վերակառուցման ճանապարհին։ Վ. Հ. Համբարձումյանը նշեց այն երեք միջոցառումները (գիտության արդյունքների հրապարակում, գեր-ստեսչական գիտության հետ համագործակցություն և ակադեմիայի ինստիտուտներին կից հատուկ կոնստրուկտորական բյուրոների ու փորձնական գործարանների ստեղծում), որոնց հետագա զարգացումը հանգեցնելու է վերակառուցման կարևոր նպատակներից մեկին՝ արտադրության վրա ակադեմիական գիտության ազդեցության ուժեղացմանը։ Այս կապակցությամբ բոլոր բաժանմունքների ուշադրությունը հրավիրվեց այն թույլ կապերի վրա, որ կան ակադեմիայի ինստիտուտների և արդյունաբերական հիմնարկների միջև։

«Հայկական ՍՍՀ ԳԱ գիտական և կազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին» թեմայով զեկուցումով հանդես եկավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար Դ. Սեդրակյանը։ Զեկուցման մեջ նշվեցին հաշվետու տարում ԳԱ գործունեության հիմնական ուղղությունները, շոշափվեցին գիտական հետազոտությունների հետագա խորացման և ինտենսիֆիկացման, աշխատանքների արդյունավետության բարձրացման անհրաժեշտության հարցերը։ Զեկուցողն ասաց, որ հասարակական գիտությունների բնագավառում վերակառուցումը կոչված է որակապես ամրապնդելու կյանքի հետ այդ գիտությունների կապը, ապահովելու դրանց անցումը էքստենսիվ ուղուց դեպի ինտենսիվ ուղի։ Պետք է կտրուկ բարձրանա հասարակական գիտությունների արդյունավետությունը, դրանց դերը սոցիալիստական հասարակության բոլոր կողմերի պլանաչափ կատարելագործման համար։ Զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Տեր-Միքայելյանը, Գ. Սարգսյանը, Գ. Բրուտյանը, Բ. Առաքելյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Ղազարյանը, թղթակից անդամներ Ա. Բաղդասարյանը, Գ. Տեր-Ստեփանյանը։

Տարեկան ընդհանուր ժողովում կայացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարգևների հանձնման ամենամյա հանդիսավոր արարողությունը։ Բեղմնավոր գործունեության համար «Մեծարման գիր» ստացավ ակադեմիկոս Մ. Ջրբաշյանը։ Վաստակագրեր ստացան Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Ս. Մովսիսյանը, Մ. Ինճիկյանը, Ա. Մկրտչյանը, գիտության դոկտորներ Մ. Ջուլալյանը, Պ. Հակոբյանը, գիտության թեկնածուներ Ռ. Սարգսյանը և Է. Ղուլյանը։ Մի մեծ խումբ գիտական աշխատողներ հանձնվեցին գովեստագրեր, պատվոգրեր։

Տարեկան ընդհանուր ժողովում գիտական հետազոտությունների նորագույն ուղղությունների մասին ելույթ ունեցան ԳԱ թղթակից անդամներ Վ. Խոջաբեկյանը, Ա. Քուչուկյանը, Վ. Դովլաթյանը։

Տարեկան ընդհանուր ժողովը հաստատեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Լենինականի գիտական կենտրոնի կանոնադրությունը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցում էին Կ. Դեմիրճյանը, Ֆ. Սարգսյանը, Ռ. Արզումանյանը, կուսակցության ու կառավարության այլ ղեկավարներ։

Ապրիլի 27—28-ին տեղի ունեցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովները, ուր լսվեցին հաշվետու զեկուցումներ և գիտական հաղորդումներ։

Մ. Կ.